ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2017 թվականի N 290-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի «ա» ենթակետի պահանջների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 182-Ա, 2017 թվականի նոյեմբերի 20-ի N 257-Ա որոշումներով ստեղծված աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Լադիկ Նահապետյանին.*

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Գառնիի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաներին սնունդ և տրանսպորտի գումարների վերահաշվարկման արդյունքում ***1130200*** *(մեկ միլիոն մեկ հարյուր երեսուն հազար երկու հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախադպրոցական կրթության ծրագրով 2017-2018 թվականների ուսումնական տարվա կոմպլեկտավորմամբ 3 երեխա ավել ներկայացնելու հետևանքով ***104400*** *(մեկ հարյուր չորս հազար չորս հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախադպրոցական կրթության ծրագրով 2017-2018 թվականների ուսումնական տարվա կոմպլեկտավորմամբ 13 երեխա ավել ներկայացնելու հետևանքով ***435100***

(չորս հարյուր երեսունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաներին սնունդ և տրանսպորտի գումարների վերահաշվարկման արդյունքում ***515300*** *(հինգ հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ջրվեժի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաներին սնունդ և տրանսպորտի գումարների վերահաշվարկման արդյունքում ***269800*** *(երկու հարյուր վաթսունինը հազար ութ հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ջրվեժի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ներառական կրթության ծրագրում ընդգրկված թվով 2 երեխաների վկայագրերի տրման ժամկետը չի համապատասխանում 2016-2017 ուսումնական տարիների կոմպլեկտավորմանը, որի արդյունքում առաջացած ***914200*** *(ինը հարյուր տասնչորս հազար երկու հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Կ. ԳՈՒԼՈՅԱՆ**

2017 թվականի դեկտեմբերի 14
ք. Հրազդան